ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

29 հուլիսի 2011 թվականի N 81-Ա

ք. Հրազդան

Ս. ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Սուսաննա Կիրակոսյանին*** տրամադրել 2011 թվականի իր ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2011 թվականի օգոստոսի 22-ից մինչև 2011 թվականի սեպտեմբերի 17-ը ներառյալ՝ 20 աշխատանքային օր:

Հիմք՝ ***Ս.Կիրակոսյանի*** անձնական դիմումը:

2. ***Սուսաննա Կիրակոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Վերին Պտղնիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել ընկերության հաշվապահ ***Սուսաննա Եղիազարյանի*** վրա, իսկ բնակչության բժշկական սպասարկումը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Աբովյանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության ընտանեկան բժիշկ ***Գայանե Հայրապետյանի*** վրա:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ